ԱԶԳԱՅԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ։

Ահա տարի և կէս է որ ամբողջ հայ ժողովուրդը ակնդէտ սպասումէ և յուզվում։ Ահա տարի և կէս է որ զբաղուած է ամբողջ հայ գրականութիւնը, որին արձագանք է տալիս նաև օտարազգի լրագրութիւնը։ Այդ ամենի պատճառն էր այն, որ Հայաստանեայց Ս. եկեղեցին ազգ քոյ ունէր։ Ի Տէր փոխուելով ապգիս Հայրապետը, ամբողջ ազգը տարի և կէս երկնումէր Ս. Լուսաւորչի Գահին ունենալ մի արժանաւոր յաջորդ՝ որ բաւնալով ազգ քոյը, ուրախութեան շղարշով պսակաւորէր իւր գլուխը՝ ուրախութիւն և սէր աղբերացնելով ամբողջ ազգի մէջ դէպ ի Հայրապետական Աթոռն ու եկեղեցին։

Երկունքի վախճանը որոշուած էր։ Մայիսի 7-ից պէտք է սկսուէր Հայրապետի ընտրութիւնը. և ահա այդ իսկ պատճառով անհուն հեռաւորութիւնից ազգի ներկայացուցիչներ խմբվումէին Ս. Էջմիածնին ձեռնարկելու ընտրութեան մեծ գործին։ Մայիսի 4-ին այդ պատգամաւորները արդէն համախմբուած էին Ս. Էջմիածնում, և բաւ կարգադրութեան ու հոգացողութեան Ամենապատիւ Տեղակալ Արքեպան հօր՝ արժանաւոր ընդունելութիւն էին վայելում։

Նորին Սրբազնութիւն Ամենապատիւ Տեղակալ Հայրը եկած պատգամաւորներին ընտրութեան գործի հետ ծանօթացնելու համար ամսոյս 5-ին առաւօտեան 9-11 ժամը Վեհարանի դահլիճում ի ներկայութեան բարձրագոյն իշխանութեան Ներկայացուցչի և Սինոդի Պրոկուրորի ժողով կազմեց, ուր կարդացուեցին Նախարարութիւնից և Կովկասեան Կառավարչապետից ստացուած կարևոր թղթոց բովանդակութիւններն, Կ. Պոլսոյ Պատրիարքարանից ստացուած կարևոր թղթերը և Կ. Պոլսոյ Պատրիարք Ամեն. Ներսէս սրբազան Արքեպիսկոպոսի հրաժարագիրը։ Ժողովը ի նկատի ունենալով որ ոչ Կ. Պոլսոյ Հոգ. Համագումար ժողովը և ոչ Ազգային երեսփոխանական ժողովը ընդունել է Նորին Ամենապատուութեան հրաժարականը, որոշեց ինքն ևս չընդունել. համարելով թէ, եթէ Նորին Ամենապատուութեան տկարութիւնը այնքան ծանր և գործին արգելը լինէր, Հոգևորական Համագումար և Ազգային Երես-

ժողովները կընդունէին Նորին սրբազնութեան հրաժարականը և անունը ընտրելեաց ցանկի մէջ չէին դնիլ. և քանի որ այդպէս չէ եղել, հետևաբար և այդ ժողովները Նորին սրբազնութեան տկարութեան անվտանգ լինելուն երաշխաւորումեն. անուամբ Ս. Էջմիածնի Համազգային ժողովին հաւատալ այդ երաշխաւորութեան. հրաժարականը չընդունելուն հաւանութիւն տուեց նաև Ամեն. Տեղակալ Սրբազան Հայրը։

Ռուսիոյ բարեխնամ կառավարութեան որոշմամբ Կաթուղիկոսական ընտրութիւնը պէտք է կատարուէր ըստ տրամադրութեան պօլօժենեայի, այն է, իւրաքանչիւր թեմի հոգևորական և աշխարհական պատգամաւորների մասնակցութեամբ։ Տաճկահայք չունէին իրանց պատգամաւորները, սակայն Կ. Պօլսոյ Պատրիարքարանը իբրև կենդրոնական Վարչութիւն ամբողջ Տաճկահայոց՝ առաջարկել էր եռանուն ընտրելեաց ցանկ, յատկորոշ քուէներով ըստ այսմ. Ամեն. Տ. Ներսէս Պատրիարք 63. Գեր. Արքեպիսկոպոսունք Տ. Մկրտիչ Խրիմեան 50, Տ. Մելքիսեդէկ Մուրատեան 42։ Որովհետև ըստ տրամադրութիւն օրինաց, ժողովին մասնակցել չկարողացողները իրաւունք ունին յայտնել իրանց կարծիքները, Նորին Ամեն. Սրբազնութիւն Տեղակալ Հայրը իբրև ներկայացուցիչ և պաշտպան առաջարկութեան Պատրիարքարանի, առաջարկեց անփոփոխ ընդունել Պատրիարքարանի եռանուն ընտրելեաց ցանկը։ Ժողովը մեծ գոհունակութեամբ ընդունեց Նորին Սրբազնութեան առաջարկութիւնը։ Այսպիսով թէ օրէնքի անթերի կատարումն եղաւ և թէ Տաճկահայոց գոհացումն տրուեց։ Այդ ժողովում կարդացուեց նաև Թիֆլիզու գլխաւոր Կառավարութեան գրութիւնը, ժողովի բացման և ընտրութեան գործը վարելու համար։ Ժողովը թէև առանին, սակայն պատկառելի և վսեմ էր. որովհետև ժողովականները քաջ իսկ ըմբռնել էին իրանց սահմանած պաշտօնի վսեմութիւնը։ Այդ ժողովում կառավարութեան ներկայացուցիչը մի համառօտ և ազդու ճառով ի կողմանէ կառավարութեան շնորհաւորեց Հայրապետի ընտրութեան մեծ գործի ձեռնարկութիւնը, յայտնելով միանգամայն թէ, Կառավարութեան ցանկութիւնն է որ ժողովը ըստ խղճի մտաց ապատ կամքով ընտրի այնպիսի անձն Կաթուղիկոս, որ թէ ազգի համակրութեանն արժանացած լինի և թէ իր բարեմասնութեամբ պատիւ բերէ Հայրապետական Աթոռին։

Ահա Նորին Գերազնուութեան ճառը.

«Ողորմած Հայրեր և Պարոններ։ Ներկայանալով Ձեր մէջ իբրև ներկայացուցիչ հոգևոր տէրութեան՝ կառավարութեան կողմից, պատիւ ունիմ շնորհաւորելու Ձեզ առաջիկայ Կաթուղիկոսական ընտրութիւնովն՝ որով պիտի բազմի Ս. Լուսաւորչի գահի վերայ նորա արժանի փոխանորդը։ Ներկայ հանդիսաւոր դէպքը, որով ցոյց ենք տալիս մենք մեր դարևոր երախտագիտութիւնը դէպի Ս. Լուսաւորչի Գահը պիտի զգայուն լինի ինչպէս ամեն մի Հայի, նոյնպէս և դէպի այդ Գահը սէր ունեցող անձի համար։ Մեր Կառավարութիւնը լաւ հասկանալով Հայի համար այդ նուիրական Գահի նշանակութիւնը, որը գտնվում է Աուսիոյ Կայսեր հովանաւորութեան ներքոյ, տալիս է Ձեզ ազատ իրաւունք ընտրելու այդ Վեհ Գահի համար այնպիսի մի անձը, որը արժանի և համապատասխան լինի այդ կոչմանը և որը կարողանայ պաշտպանել Եկեղեցու և ազգի շահերը (Նոր - Դար № 78)։ Այս ճառին հետևեց Ամենապատիւ Տեղակալ Սրբազան Հօր և բոլոր աշխարհական ու հոգևորական պատգամաւորների շնորհակալութիւնը դէպի Պ. Ճառատացը։

Ընտրութեան գործը սկսուեց ամսոյս 7-ին. Այդ օր հանդիսաւոր Սուրբ Պատարագից յետոյ պատգամաւորները պէտք է երդուէին. ուստի ըստ հրահանգութեան՝ առաւօտեան 9-րդ ժամին բոլոր հոգևորական և աշխարհական պատգամաւորները խմբուեցին Վեհարանի դահլիճը, ուր Ամենապատիւ Տեղակալ Հայրը յարդարելով հանդիսաւոր գնացքը Վեհարանից դէպի Տաճարը, առաջնորդեց նոցա։ Խուռն բազմութիւն Երևանու և Վաղարշապատի հասարակութեան խառնել էին Տաճարի շուրջը և Վեհարանի բոգը։ Զանգակները սկսեցին որոտալ և սկսուեց պատգամաւորութեան գնացքը։ Պատգամաւորութեան առաջնորդում էր Տեղակալ Հայրը, յաջմէ և յահեկէ Կառավարութեան ներկայացուցիչն ու Սինոդի Պրոկուրորը, Սինոդի անդամները, թեմական առաջնորդներն միաբանութեան պատգամաւորները և աշխարհական պատգամաւորները զոյգ զոյգ։ Եկեղեցի մտնելուց յետոյ հոգևորականները կանգնեցին դասերում՝ իրանց յատկացեալ տեղը, իսկ աշխարհականները Ս. Իջման Սեղանի ձախ կողմը։ Ս. Պատարագը, որ Իջման տեղումն էր, աւարտուելուց յետոյ, ի ներկայութեան խուռն բազմութեան գոհացողական մաղթանք կա-

տարուեց· յետոյ երդմնեցուցչութեամբ Ամենապատիւ Տեղակալ Սրբազան Հօր երդուեցին բոլոր աշխարհական պատգամաւորները։ Հետեւեալ օրը, ամսոյս 8-ին առաւօտեան 9-րդ ժամին բոլոր հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորները համախմբուեցին Ս. Էջմիածնի Տաճարը. նախ քան ժողով բանալը պատգամաւորները մտան յանս Ս. Իջման Սեղանին աղօթելու. Ամենապատիւ Տեղակալ Սրբազան Հայրը երկու վարդապետների մասնակցութեամբ ընտրութեան վերաբերեալ պատշաճաւոր աղօթքն եւ սաղմոսերգութիւնը կատարելուց յետոյ, բազմեց իր նախագահական աթոռի վերայ, եւ երբ հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորները իրանց աստիճանի ու կոչման պատշաճ տեղերը բռնեցին, Ամենապատիւ Տեղակալ Հայրը բաց արեց ժողովը մի իմաստալից ատենաբանութեամբ։ Նորին Սրբազնութիւնը յայտնեց որ ինքն հինգ Կաթուղիկոս է տեսել եւ նոցա ձեռքի տակ գործել է, երեք Կաթուղիկոսների ընտրութեան մասնակցել է։ Ահա Նորին Սրբազանութեան ատենաբանութիւնը։

ՍՐԲԱԶԱՆ ԵՂԲԱՐՔ ԵՒ ՄԵԾԱՊԱՏԻՒ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ ԱԶԳԻ.

Այս երրորդ անգամն է, որ ես մասնակցում եմ Կաթուղիկոսական ընտրութեան ժողովին։ Երկու անգամ եւս հանդիսատես եղած եմ այդպիսի ընտրութեանց։ Վերջին չորս կաթուղիկոսաց գործողութեանց կենդանի վկայ եմ։ Իւրաքանչիւր կաթուղիկոսութեան միջոցը մի մի շրջան է ազգի համար եւ կարծես իւրաքանչիւր շրջան իւր համապատասխան կաթուղիկոսն է ունեցած։ Հանգուցեալ Յովհաննէս կաթուղիկոսն՝ բացի Ռուսաստանի Հայոց վիճակները կարգադրելուց եւ Էջմիածնայ մէջ Սինոդի ատեանը բանալուց՝ աշխատեց Ս. Էջմիածնայ Աթոռը մեծագումար պարտքից ազատել՝ իւր տնտեսագիտութեամբ եւ Աթոռի աղբիւրներով առանց ազգին ձեռք մեկնելու։ Ներսէս հանգուցեալ Կաթուղիկոսն՝ բացի Ներսիսեան դպրոցը հաստատելուց՝ ինքն եղեւ ուսումնարան եւ ուսուցիչ բոլոր Հայոց ազգի եւ բարոյապէս միացրեց Հայոց ազգը ի մի հօտ եւ մի հովիւ։ Եւ յիրաւի Նորանից առաջ Հայոց ազգը անշարժութեան եւ կարծես թէ թմրութեան մէջ էր. նա բացաւ մերայնոց աչքերն եւ լուսաւորեց միտքերն, որպէս զի իւրեանց շրջապատող հանգամանքները լաւ նկատեն եւ հեռատեսութեամբ փարատին իւրեանց դրացի ազգերի հետ։ Բարեյիշատակ Մատթէոս

Կաթուղիկոսն՝ բացի ուսումնարաններ հաստատելուց զանազան քաղաքաց և գիւղօրէից մէջ, Ներսիսեան դպրոցը բոլորովին բարեկարգեց՝ հոգաբարձական կանոնաւոր ընտրութիւն սահմանելով։ Նա քաղաքաց և գիւղօրէից ժողովրդոց իրաւունք տուեց իւրեանց ուսումնարանների համար հոգաբարձուներ ընտրելու և նորանցով կառավարելու այդ ուսումնարանները։ Բարեյիշատակ Գէորգ Կաթուղիկոսը Հայրապետական Աթոռը այնքան բարձրացոյց փառօք և պատուով, մինչ անգամ ոչ ոք չի համարձակվում ձեռք հասցնել այդ Առաքելական Գահին։

Այժմ, սիրելիք, եթէ կամիք Էջմիածնի համար մի վանահայր ընտրել, որ միանգամայն և կառավարէ Ռուսաստանի Հայոց վիճակները, — ընտրեցէ՛ք մեր բարձրաստիճան հոգևորականներից զոր և կամիք։ Ես երաշխաւոր եմ, որ նոքա կարող են թէ Էջմիածնայ վանահայրութիւն անել և թէ Ռուսաստանի Հայոց վիճակները կառավարել։ Իսկ թէ կամիք մի այնպիսի անձն ընտրել ի պատիւ կաթուղիկոսութեան, որ՝ բացի վանահայրութիւնից Ս. Էջմիածնի և Ռուսաստանի Հայոց վիճակների հովուապետութիւնից՝ ձեռնհաս լինի օգնելու Փոքր Ասիայի, Ատրպատականի և Պարսկաստանի Հայոց, նոցա իւր բարձր հովանաւորութեան ներքոյ առնելու և այլակրօն քարոզիչների որսորդութիւնից ազատելու, — ընտրեցէ՛ք այն բարձրաստիճան հոգևորականին, որ Սան-Ստեֆանօյի դաշնագրութեան մէջ ստեղծել տուաւ 16րդ յօդուածը։ Ընտրեցէ՛ք այն անձնազոհ հոգևորականին, որ Եւրոպական պետութեանց դռները բաղխելով ողորմութիւն էր խնդրում Հայոց ազգի համար. միրՕապէս ի պատիւ միութեան ազգի, ընտրեցէ՛ք այն անձանց, որոնց ներկայացրել են մեր Տաճկաստանի եղբարք, և Աստուած կօրհնէ ձեզ և ձեր ընտրութիւնը»։

Նորին Սրբազնութիւնը նախքան իւր ատենաբանութիւնը վերջացնելը, յայտնեց որ այդ օրուան ժողովը ըստ տրամադրութեան օրինաց՝ պէտք է Ռուսաստանի և արտասահմանեան նշանաւոր եպիսկոպոսներից ընտրի չորս ընտրելիներ. նախապէս յայտնելով որ ինքն բնաւ չէ կամենում իւր անունը ընտրելեաց ցանկի մէջ դնել։ Ժողովը այս ատենաբանութեան տպաւորութեան տակ շնորհակալութիւն յայտնեց Նորին Սրբազնութեան. և ըստ ակնարկութեան Նորին Սրբազնութեան կարդացուեց նշանաւոր եպիսկոպոսների անուանական ցանկը։ Եւ որովհետև ազգիս մեծամասնութեան

ցանկութիւնը արդէն յայտնուած էր Ներսէս Պատրիարքի և Խրիմեան Մկրտիչ ու Մուրատեան Մելքիսեդէկ Արքեպիսկոպոսների ընտրութեան համար, ուստի և այդ անունները առանց վիճաբանութեան Տեղակալ Սրբազան Հօր առաջարկութեամբ, և հաւանութեամբ Ժողովոյն՝ առնուեցին չորս ընտրելեաց ցանկի մէջ. ըստ որամագրութեան օրինաց՝ պակասումէր չորրորդը, Նորին Սրբազնութիւն Տեղակալ Հայրը առաջարկեց Կ. Պոլսոյ Հոգ. Համագումար Ժողովի եօթն ընտրելիներից մէկի անունն էս աւելացնել, առանց Մակար Արքեպիսկոպոսի անունը մէջ բերելու: Այս առաջարկութիւնը ընդունելի եղաւ Ժողովին և այդ էս Ժողովի հաւանութեամբ որոշուեց լինել Ս. Երուսաղէմայ Պատրիարք Ամենապատիւ Տ. Նարայի Արքեպիսկոպոս: Ժողովը փակուեց 12½ին: Վաղարշապատից և Երևանից եկած խուռն բազմութիւնը Եկեղեցու դրանը ակնդէտ սպասումէին այդ օրուայ Ժողովի հետեւանքին:

Ամսոյս 9ին առաւօտեան ժամը 9ին պատգամաւորները հաւաքուեցին եկեղեցի, իսկ Ժողովուրդը խռնեց եկեղեցու շուրջը: Ժողովի նախագահ Ամենապատիւ Տեղակալ Սրբազան Հայրը առաջարկեց Ժողովին Ներսէս Պատրիարքից ստացուած հրաժարական հեռագիրը և ասաց. «Այս հրաժարական հեռագիրը առաջարկելով Ս. Իջման տեղի Սեղանի առաջ, թողնում եմ Ժողովիդ խղճին անպարտ համարելով ինձ»: Ժողովը ի նկատի ունելով որ նախորդ Ժողովում արդէն որոշուած էր չընդունել Ներսէս Պատրիարքի հրաժարականը, դարձեալ ձայնից բազմութեամբ չընդունեց:

Նորին Սրբազնութիւն Տեղակալ Հայրը յայտնեց որ այդ օրուայ Ժողովը զբաղուելու էր չորս ընտրելիների յայտնի քուէարկութեամբ. յայտնելով միանգամայն որ ձայնից բացարձակ առաւելութիւն ստացողը կըհամարուի առաջին ընտրեալ, իսկ համեմատական առաւելութիւն ստացողը նորա կանդիտատ: Այս ազգարարութիւնից յետոյ առաջարկուեց ստորագրութեան առաջին ընտրելիի – այն է Ամենապատիւ Տ. Ներսէս Սրբազան Արքեպիսկոպոսի ընտրութեան թուղթը. Նորին Սրբազնութիւնը ստացաւ 27 ձայն ընդդէմ 5 ձայնի. ապա առաջարկուեց Ամենապատիւ Տէր Մկրտիչ Արքեպիսկոպոսի ընտրութեան թուղթը, Նորին Սրբազնութիւնը ստացաւ 13 ձայն ընդդէմ 19 ձայնի. ապա առաջարկուեց Զմիւռնիոյ Արքեպիսկոպոս Մելքիսեդէկ Մուրատեանի ընտ-

րութեան թուղթը․ Նորին Սրբազնութիւնը ստացաւ 19 ձայն ընդդէմ 13 ձայնի․ հուսկ ուրեմն առաջարկուեց Ս. Երուսաղէմայ Ամեն. Պատրիարք Եսայի Արքեպիսկոպոսի ընտրութեան թուղթը․ Նորին Սրբազնութիւնը ստացաւ 8 ձայն ընդդէմ 24 ձայնի։

Այսպէս Ներսէս Պատրիարք 27 ձայնով ընդդէմ 5 ձայնի՝ իսկ Զմիւռնիոյ Արքեպիսկոպոս Մելքիսեդէկ 19 ձայնով ընդդէմ 13ի համարուեցին առաջին ընտրեալներ՝ առաջարկելի ի հաստատութիւն Թագաւոր Կայսեր․ առաջինը որպէս Կաթուղիկոս, իսկ երկրորդը որպէս կանդիտատ։ Մնաց օրագրութիւն և այլ պաշտօնաւոր գրութիւններ կազմելը։

Ժողովը փակուելիս՝ Բարձրագոյն Իշխանութեան Ներկայացուցիչը մի բերանացի ճառով շնորհաւորեց ժողովին գործի յաջող ելքը, համարելով որ ժողովը օրինակելի կանոնաւորութեամբ վարեց իւր ստանձնած պարտաւորութիւնը և այս ի շնորհս ժողովի Նախագահ Ամենապատիւ Տէր Մակար Սրբազանի․ շնորհակալ եղաւ համբուրելով Նորին Սրբազնութեան Աջը։ Այս շնորհակալեաց զգացումը տիրում էր բոլոր ժողովականների վերայ, որոնք Կառավարութեան Ներկայացուցչի հետ միասին ի ցոյց շնորհակալեաց համբուրեցին Նորին Բարձր Սրբազնութեան Աջը։

Ժողովը փակուեց, Տաճարի դռները բաց եղան, իսկ Տաճարի շուրջը խռնուած Երևանից և Վաղարշապատից եկած խուռն բազմութիւնը լսելով ժողովի յաջող և Ազգի բաղձացեալ հետևանքը, երկարատև ուռաձայն կեցցէներով թնդացրեց օդը, գոչելով․ Կեցցէ ընտրեալն Ներսէս․ կեցցէ կանդիտատն Մելքիսեդէկ․ կեցցէ ժողովն Համազգային․ կեցցեն ժողովականները։ Տեսարանը սրտաշարժ էր, տպաւորութիւնը հոգեզմայլ։

Բերկրութիւնը հասարակաց դարձնելու համար, ամեն մինը շտապեց հեռագրել իւր բարեկամին և ծանօթին ժողովի հետևանքը։

Նորին Սրբազնութիւն Տեղակալ հայրը ուղղեց հետևեալ հեռագիրը առ Ամեն. Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պատրիարք Կ. Պօլսոյ։

«Ժողովին ներկայացուցի Ձեր հրաժարական հեռագիրը որ չընդունուեց, և մեծամասնութեամբ ձայնից ընտրուեցիք Կաթուղիկոս ամենայն Հայոց․ շնորհաւորեմ»։

Ահա ի կողմանէ ժողովրդականաց առ Ամեն. Տ. Ներսէս Արքեպիսկոպոսը ուղղած հեռագիրը»։

ԱՌ ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ

Սինոդի, Էջմիածնայ միաբանութեան՝ և վիճակաւոր առաջնորդների ներկայացուցիչներս, այլ և աշխարհական պատգամաւորներս Հայոց Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի երջանիկ ենք, որ եղանք հաւատարիմ թարգման բովանդակ Հայոց՝ հրաւիրելով Ձեր Սրբութիւնը ի Գահ Կաթուղիկոսութեան Սրբոյ Լուսաւորչին։ Ձերդ Սրբութիւն, մենք կատարելապէս հաւատի ենք, որ Ձեր Կաթուղիկոսութիւնը եկեղեցւոյ և ազգի բարօրութեան գրաւական է լինելու, և որ, Ներսէս Զ-րդի անունը հայերը նոյնքան կօրհնեն, որքան օրհնած են եղել հինգ Ներսէսները։

Աշխարհական պատգամաւորները ստորագրելով օրագրութիւնը, ամսոյս 10-ին երեկոյեան պահուն դուրս եկան իրանց տեղերը ուղևորելու, Տեղակալ Հօր խոհականութեան շնորհիւ ընտրութեան յաջող ելքի համար ի ցոյց շնորհակալեաց Նորին Սրբազնութեան մատուցանելով հետևեալ ուղերձը։

Ամենապատիւ Տէր ՄԱԿԱՐ Սրբազան Արքեպիսկոպոս, Հայրապետական Տեղակալ Ամենայն Հայոց և Ատենապետ Համազգային Ընտրողական Ժողովոյ։

Գերզգօն Հայր.

Ըստ պարտու պաշտաման պատգամաւորութեանս մերոյ այն ինչ ի գիրկս ժողովեալք Մօրն լուսոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, ղընտրութեան արժանաժառանգ յաջորդի յաթոռ քահանայապետութեան ամենայն Հայոց յանձին բերէաք զիդձ և զփափագ համօրէն հաւատացեալ հօտին Հայաստանեայց, կարի դժուարին իմն էր և յանհնարիցն իսկ զոգցես սակի առ ցանկալին ժամանել կ՚ա նպատակի, եթէ չէր իսկ աջակցեալ մեզ ամենախնամ բազուկ Բարձրելոյն ընդ ձեռն Ամենապատիւ Սրբազնութեան Ձերոյ, որ իբրև զղեկավար ճարտար յալեաց անտի մրրկեալ ամբոխման բազմագիմի կարծեաց՝ խոհեմութեամբ մեծաւ զիւռաց հանել զմեզ ի նաւահանգիստն սիրոյ և խաղաղութեան, անարատ պահելով ի ժառանգութիւն ազգային զնուիրական աւանդն միութեան հօտին Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ՝ զաւանդեալն մեզ յերանելի նախնեաց մերոց։

Զիք մեզ այժմ քաղցրագոյն քան զայս գիտակցութիւն, եթէ զոր բանիւ բերանոյ բարբառեցաք, զնոյն և յարգասիս գործոց պատկեցաք, ոչ զի մեր միայն էին բաղում տենչանք սիրոյ և միութեան, ոչ զի մեք միայն զնախանձ արդարութեան և զօրինաց նախանձեցաք, ոչ զի առ մեզ և եթ յանգ ելեալ էին ամենայն ակնկալութիւնք հօտին Եկեղեցւոյ, այլ զի Դուք, Ամենապատիւ Հայր, իբրև զառաջնորդ խորագէտ՝ վեհանձնաբար յուզեալ ի խնդիր միութեան Եկեղեցւոյս մերոյ՝ ի հանճար մտաց ձերոց զուզիղ պողոտային ցուցիք մեզ զշաւիղս գործողութեանց։

Զշնորհակալութեան մերոյ մեծի և զերախտագիտութեան արձանացուցեալ աստանօր զհաւատոյս խորին զգացմանց՝ փութամք հռչակել զանուն մեծութեան արթուն և քաջ Ամենապատիւդ մերոյ առ առաքիչս մեր և վկայել առաջի ամենեցուն զարդար ջանից ձերոց և զաջնութեանց ի շինութիւն մեծի Տանս Հայաստանեայց։

Հուսկ ուրեմն կայ մնայ մեզ, Սրբազան Տէր, ազաչել զՁեզ յանուն համօրէն եղբարց մերոց, զի հաճեսջիք առ յապայն ցժամանումն Նորընտիր Հայրապետի Հայոց ի Մայր Աթոռս խնամել զամենայն հառատութիւնս Սրբոյ Էջմիածնի, յանխափան յարատևութիւն և ի բարգաւաճումն. և որպէս զարդիս ի շնորհս Ձերոյ արթուն հսկողութեան և խոհական կառավարութեան պայծառացեալ փայլին այնոքիկ հաստատութիւնքն, ի կարգս բարիս և յարդիւնս մխիթարականս, մեծ է յոյս մեր, զի և յետ այսորիկ ընդարձակ արթնութիւն Ձեր և անկեղծ սէրն առ նուիրական շահս Եկեղեցւոյ ունի ապահովել զայնոսիկ հաստատութիւնս ի խաղաղութեան և ի յարատևութեան. որով արդարև կրկնապատակեսցի չափ երախտագիտութեան ազգիս մերոյ առ Ամենապատիւ Հայրութիւն Ձեր, նա մանաւանդ և վստահութիւն ամենեցուն, որոց ի սիրտս բնակեալն է սէր և հաւատարմութիւն առ ամրիծ և առաքելական Սուրբ Եկեղեցին Հայաստանեայց։

Պատգամաւորք Համազգային Ընտրողական Ժողովոյ.

(Իսկականին ստորագրած են)

Ղահրաման Մելիք - Ադամալեան

Թատուր - Խան Սէթ - Խանեան

Բ. Մէլիք - Ղարագեօզեանց

Ներսէս Ներսիսեանց

Սարգիս Վարշամեանց
Աղէքսանդր Ղազարեանց
Յովհաննէս Սարգսեանց
Արշակ Նահապետեան
Արգար Յովհաննիսեան

10 Մայիսի 1884 թ.
Ս. Էջմիածին

Նորին Սրբազնութիւնը այս ուղերձը ընդունելով ասաց. «Ես ընդունում եմ այս իբրև ձեր սրտի զգացմանց յայտարար. ես սորանով առաւել վարձատրուած եմ համարում ինձ այն աշխատանքի և ջանացողութեան մէջ՝ որը ես ցոյց տուի Ազգի, Եկեղեցւոյ և Մայր Աթոռոյս անքակտելի միութեան և կապակցութեան համար։ Ուստի շնորհակալ եմ Ձեզնէ և օրհնում եմ Ձեր ճանապարհորդութիւնը»։

Ժողովին մասնակցեցին 32 անձինք, որոնցից իննը աշխարհական. ահա ժողովականաց ցուցակը։

ՑՈՒՑԱԿ

Անուանց անդամոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի, Միաբանութեան Աթոռոյս և Հոգևոր պատգամաւորաց՝ եկելոց յընտրութիւն Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց։

№ ԱՆՈՒԱՆՔ

1. Մակար Արքեպիսկոպոս Տեղակալ Ատենապետի Սինոդի։

Անդամք Սինոդի

2. Մկրտիչ Արքեպիսկոպոս Բարամեանց.
3. Մեսրովբ Եպիսկոպոս Սմբատեանց.
4. Յովակիմ Եպիսկոպոս Տէր Գրիգորեանց.
5. Երեմիա Եպիսկոպոս Գալստեան.
6. Ներսէս Եպիսկոպոս Խուդավերդեան.
7. Գրիգոր Եպիսկոպոս Տէր Մաթէոսեան. (բացակայ)
8. Մամբրէ վարդապետ Սանասարեանց.

Պատգամաւորք ի կողմանէ միաբանութեան Սրբոյ Էջմիածնի։

9. Սերովբէ Եպիսկոպոս Արարատեանց.
10. Կարապետ վարդապետ Տէր Գալստեան.
11. Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեան.

12. Արիստակէս վարդապետ Դաւթեան.
13. Համազասպ վարդապետ Համազասպեանց.
14. Յովհաննէս վարդապետ Շիրակունի.
15. Յուսիկ վարդապետ Մովսիսեան.

Պապական-որդի վիճակաց Ռոսսոսպանի, Տաճկոսպանի և Պարսկոսպանի։

16. Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանց Կառավարիչ Թեմին Ղարաբաղու։
17. Թադէոս Եպիսկոպոս Կառավարիչ Թեմին Շամախւոյ։
18. Սուքիաս Եպիսկոպոս Կառավարիչ Թեմին Աստրախանայ։
19. Արիստակէս Եպիսկոպոս վիճակաւոր Տփխիսու։
20. Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանց Կառավարիչ Հոգևոր գործոց Կարս և Բաթում Նահանգաց։
21. Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեանց Փոխանորդ Թեմական Երևանայ։
22. Թադէոս Եպիսկոպոս Տէր Դանիէլեան Կառավարիչ Թեմին Ատրպատականի։
23. Ստեփաննոս Եպիսկոպոս Մխիթարեանց պատգամաւոր ի կողմանէ վիճակաւորին Հայոց Պարսկաստանի և Հնդկաստանի,
24. Սարգիս վարդապետ Տէր Գասպարեանց պատգամաւոր ի կողմանէ վիճակաւորին Հայոց Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ։

ՅՈՒՅԱԿ.

Անուանց աշխարհական պատգամաւորաց որոց են իրաւունք ընտրութեան Մայրագոյն Պատրիարք - Կաթուղիկոսի ամենայն Հայոց։

25. Դէյստվիտելնի Ստատսկի Սօվետնիկ Ղահրաման Խաչատուրեան Մելիք - Աղամալով, պատգամաւոր ի կողմանէ ժողովրդականաց Երևանայ Հայոց Թեմի։
26. Պրոֆեսսոր Ներսէս Յովսէփեան Ներսիսեանց, պատգամաւոր ի կողմանէ ժողովրդականաց Նոր - Նախիջևանայ և Բեսարաբիոյ Հայոց Թեմի։
27. Պ. Աբգար Յովհաննիսեանց, պատգամաւոր ի կողմանէ ժողովրդականաց Տփխիսու Հայոց Թեմի։
28. Պ. Յովհաննէս Գրիգորեան Սարգսեանց, պատգամաւոր ի կողմանէ ժողովրդականաց Աստրախանայ Հայոց Թեմի։
29. Աստիճանաւոր Բալայ - բէկ Մելիք - Ղարագեոզեանց, պատգամաւոր ի կողմանէ ժողովրդականաց Ղարաբաղու Հայոց Թեմի։

30· Տիտուլեարնի Սովետնիկ Սարգիս Վարշամեանց, պատգամաւոր ի կողմանէ Ժողովրդականաց Շամախւոյ Հայոց թեմի։

31· Գերաստիճան Մատուր-Խան Սէֆ-Խանեան, պատգամաւոր ի կողմանէ Ժողովրդականաց Հայոց Ատրպատականի։

32· Պ. Բժիշկ Աղէքսանդր Ղազարեանց, պատգամաւոր ի կողմանէ Ժողովրդականաց Հայոց Կարս և Բաթում նահանգաց։

33· Պ. Արշակ Նահապետեանց, պատգամաւոր ի կողմանէ Հայոց Հնդկաստանի ըստ հեռագրոյ Գրիգորիս Արքեպիսկոպոսի։

ՑՈՒՑԱԿ

Անուանց երեւելի Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց Հայոց եղելոց ի սահմանս Ռուսաստանի և արտաքոյ այնորիկ։

Անուանք Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց Ռուսաստանի։

Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ։

1· Մակար Արքեպիսկոպոս
2· Գրիգոր Արքեպիսկոպոս Յովբեանց
3· Մկրտիչ Արքեպիսկոպոս
4· Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանց
5· Թադէոս Եպիսկոպոս Զիւնական
6· Սերովբէ Եպիսկոպոս Արարատեանց
7· Մեսրովբ Եպիսկոպոս Սմբատեանց
8· Յովակիմ Եպիսկոպոս տէր Գրիգորեանց
9· Գրիգոր Եպիսկոպոս Աղաթիրեանց
10· Երեմիա Եպիսկոպոս Գալստեան
11· Սուքիաս Եպիսկոպոս
12· Գրիգոր Եպիսկոպոս Աղուանեանց
13· Ներսէս Եպիսկոպոս
14· Գրիգոր Եպիսկոպոս տէր Մատթէոսեանց
15· Յովհաննէս Եպիսկոպոս տէր Յարութիւնեան
16· Ստեփաննոս Եպիսկոպոս Մխիթարեանց
17· Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեան
18· Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեանց

Անուանք Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց։

Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ

1· Եսայի Արքեպիսկոպոս Պատրիարք Ս. Երուսաղէմի
2· Ներսէս Արքեպիսկոպոս Պատրիարք Կ. Պոլսոյ

3. Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեան, նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ
4. Ցարութիւն Արքեպիսկոպոս նախկին Առաջնորդ Կարնոյ
5. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Բէյ
6. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան
7. Խորէն Եպիսկոպոս Աշուղեանց
8. Մելքիսեդէկ Եպիսկոպոս Զմիւռնիոյ

Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

9. Գրիգորիս Արքեպիսկոպոս Առաջնորդ Պարսկաստանի և Հընդկաստանի
10. Թադէոս Եպիսկոպոս տէր Դանիէլեան Առաջնորդ Ատրպատականի

Սինոդը օրագրութեամբ Մայիսի 12 ին № 1148 ընտրութեան վերաբերեալ թղթերը ըստ հրահանգութեանն ուղարկեց Կոմկասեան Կառավարչապետին Թիֆլիզու Հայոց թեմի Առաջնորդ Գեր. Արիստակէս Եպիսկոպոսի, նոյն թեմի աշխարհական պատգամաւոր Պ. Աբգար Յովհաննիսեանի և Ղարաբաղու թեմի պատգամաւոր Նագվօրնի Սոլեանիկ Բալաբէկ Մելիք-Ղարագեօզեանի: միջոցաւ:

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի գրութիւնը յանուն Ամեն. Տեղակալ Սրբազան Հօր Ս. Էջմիածնի Համազգային ընտրողական ժողովում Տաճկահայոց կողմից Պատուիրակ լինելու համար:

«Ամենապատիւ Տէր Մակար Սրբազան Արքեպիսկոպոս արժանընտիր Տեղակալ կաթուղիկոսութեան ամենայն Հայոց Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի, և պատուիրակ Հայոց Օսմանեան պետութեան:

Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովն Հայոց Օսմանեան պետութեան գումարեալ յերկրորդում աւուր ամսեանն Ապրիլի այսր ամի յսթոռանիստ աւագ Եկեղեցւոջ մայրաքաղաքիս, ըստ ասենական կարգաց և կանոնաց քուէարկեաց զերիս ընտրելի եպիսկոպոսունս ի կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց Արարատեան Մայր Աթոռոյ, և վճռեաց միանգամայն զայն եռանուն ցուցակ ընտրելեացն հաղորդել ամենայն Հայոց կաթուղիկոսութեան ընտրողական ժողովոյն պատուիրակաց ի ձեռն Պատուիրակի:

Ըստ այսմ վճռոյ Ազգային երեսփոխանական ժողովոյն Հայոց Օսմանեան պետութեան փութամ զտեղեկագիր ընտրական գործողութեանց նորին իսկ ընտրելեաց յղել ընդ գրոյս առ Ամենապատուութիւն Ձեր, և յանձն առնել Բարձր Սրբազնութեան Ձերում զպաշտօն պատուիրակութեան Հայոց Օսմանեան պետութեան, խնդրելով զի յանուն և ի դիմաց մերոց և ամենայն վիճակացն Հայոց, որ ընդ Օսմանեան պետութեամբ են, բարեհաճեսջիք ներկայացուցանել ամենայն Հայոց Կաթուղիկոսութեան Համազգային ընտրողական ժողովոյն զայս ամենայն որոշողութիւնս Ազգային երեսփոխանական ժողովոյն, և իբրև պատուիրակ Հայոց Օսմանեան պետութեան ի համազգական բարձր ժողովի անդ առաջի առնել զիրաւունս մասնակցութեան Օսմանեան Հայոց, և խնդրել զգործադրութիւն որոշողութեանց և վճռոյ, որ ի տեղեկագրի անդ մերում, Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյ Հայոց իբր ներկայացուցչի համօրէն վիճակաց Օսմանեան Հայոց, յանուն մեր և ժողովոյն, վասն ընտրութեան Հայրապետի ամենայն Հայոց:

Ամենապատիւ Սրբազան եղբայր, ի սահմանի աստ յայտնիկ է պաշտօն պատուիրակութեան Բարձր Սրբազնութեան Ձերոյ յանուն և ի դիմաց ամենայն վիճակաց Հայոց Օսմանեան պետութեան, զոր յուսով եմք զի Ձերովդ հանրածանօթ իմաստութեամբ և խոհականութեամբ ի յանդ հանելով բարեհաճելոց էք փութալ զելս իրացն հաղորդել մեզ:

Քահանայապետն երկնից Տէր մեր Յիսուս Քրիստոս առաջնորդեսցէ համազգական ընտրողական բարձր ժողովոյդ յընտրութիւն արժանաւորագոյն Հայրապետի ամենայն Հայոց ի գահակալութիւն մեծի Աթոռոյն Սրբազան Առաքելոցն մերոց Թադէի և Բարդուղիմէի, և առաւելագոյն առն Աստուծոյ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի:

* * *

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ընտրական գործողութեանց Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյ Հայոց Օսմանեան պետութեան վասն ընտրութեան Հայրապետի ամենայն Հայոց:

« Առ Ամենապատիւ Տէր Մատթէոս Սրբազան արքեպիսկոպոս արժանընտիր Տեղակալ Կաթողիկոսութեան ամենայն Հայոց, և առ Գերապատիւ Խոր-

Հրովարտակն Անդրանիկ Սինոդի Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի, և առ Համաւգային ընտրողական ժողովն յընտրութիւն Հայրապետի ամենայն Հայոց։

Ըստ սահմանելոյ Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյ, որպէս կանխեցաք գրել յառաջներորդում աւուր ամսեանն Յունուարի ընդ համարաւ 190, և ի մետասաներորդում աւուր ամսեանն Փետրուարի այսր ամի ընդ համարաւ 220, հրաւիրեցաք զամենայն հեռաբնակ վիճակաւորս, զանպաշտօն եպիսկոպոսունս որ ի գաւառս, զվանահայրս որոց իցէ միաբանութիւն, նոյնպէս և զմերձաւորս, գալ ի մասնակցութիւն քուէարկութեան առ ի պատրաստել զեօթնանուն ցուցակ Կաթուղիկոսական ընտրելեաց, նշանակեալ ի հրաւիրագիրս անդ, թէ յերկոտասաներորդում աւուր ամսեանն Մարտի գումարելոց է եկեղեցական համագումար ժողովն ի պատրաստութիւն ցանկի ընտրելեաց։

Ի վերոյ նշանակեալ յերկոտասաներորդում աւուր նոյն ամսոյ գումարեցաւ Եկեղեցական համագումար ժողովն յաւագ եկեղեցւոջ Կոստանդնուպօլսոյ, և յամենայն հրաւիրելոց աստի յայսցանէ՝ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքն Սրբոյ Երուսաղէմի, որ յաւուրս յայսոսիկ գտանի ի մայրաքաղաքիս, և Ներկայացուցիչն Տանն Աղթամարայ, անձամբ մասնակցեցան, իսկ ինն և տասն հեռաբնակ վիճակաւորքն՝ այն է՝ Վանայ, Գարբերդի, Տրապիզոնի, Ակնայ, Երզնկայի, Եւդոկիոյ Եդեսիոյ, Կեսարիոյ, Կուտինայի, Զարաանճագի, Շապին-Գարահիսարի, Չմշկածագի, Պաղտատու, Սղերդի, Բասենու, Պայազետի, Զնքշոյ, Պիլէճիկի և Կիպրոսի, և յանպաշտօն եպիսկոպոսաց, որ ի գաւառս,

Գեր. Տէր Յարութիւն Ս. եպիսկոպոս Վեհապետեան
» » Յակոբ Ս. » Խիզանցի
» « Երեմիա Ս. » Տ. Սարգսեանց
» » Երեմիա Ս. » Տ. Սահակեան
» » Աստուածատուր Ս. » Տ. Յովհաննէսեանց

և չորեքին Վանահայրք՝ որոց գոյ միաբանութիւն, այն է՝ Կոուց-Անապատի, Մակարայեցւոց, Բարձրահայեաց և Ածպտերի վանուց, գրութեամբ ետուն զքուէս իւրեանց վասն ցուցակի ընտրելեաց։ Իսկ մերձաւորաց վիճակաւորքն Ադրիանուպօլսոյ, Պրուսայու, Զմիւռնիոյ, Ռոտոսթոյի և Նիկոմիդիոյ, և վանահայր վանուցն

Արմաշու, որպէս նաև վիճակաւորքն Կարնոյ, Տարօնոյ, Արաբկերտու և Գաղատիոյ, նոյնպէս և եօթն եպիսկոպոսունք որք արդ ի մայրաքաղաքիս են.

Գեր. Տէր Գրիգոր	Ս.	Եպիսկոպոս	Տ. Պօղոսեան
» » Սիմէոն	Ս.	»	Սէֆէրեան
» » Խորէն	Ս.	»	Նար—Պէյ
» » Մատթէոս	Ս.	»	Իզմիրլեան
» » Մեսրոպ	Ս.	»	Սուքիասեան
» » Տիմոթէոս	Ս.	»	Սափրիչեան
» » Յարութիւն	Ս.	»	Յովհաննէսեան

Քարոզիչ վարդապետք, աւագ և աթոռական քահանայք, որոց ամենեցուն թիւ յանգեցաւ մինչ ցիննսուն և վեց, անձամբ մասնակից եղեն նոյն քուէարկութեան:

Թէ ի գումարման աստ յայսմիկ, և թէ յերկրորդում գումարման՝ որ յիննեւտասներորդում աւուր ամսեանն Մարտի, եկեղեցական Համագումար ժողովոյ, ի վերայ ընդհանուր ցուցակի եպիսկոպոսաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, որոնց եհաս թիւ մինչ ի վաթսուն և վեց, ի նոյն վաթսուն և եօթանց անտի եպիսկոպոսաց ի կրկին գումարմունս անդ գաղտնի քուէարկութեամբ որոշեցան եօթանեքին արժանաւորագոյնք ի գահակալութիւն Արարատեան գերագահ Աթոռոյն, որոց անուանքն են ըստ առաւելութեան քուեայց:

1-ն Ամեն. Տէր Ներսէս	Ս.	Արքեպ. Պատր.	Կ. Պոլսոյ	քուէ 63
2-ն Ամեն. Տէր Մակար	Ս.	» Տեղակալ Հայրապ. ամ.	Հայոց	» 53
3 ն Գեր. Տէր Մելքիսէդ	Ս.	եպիսկ. Մուրատեան առ.	Զմիւռ.	» 51
4-ն Գեր. Տէր Մատթէոս	Ս.	եպիսկ. Իզմիրլ.	քարոզ. ն. Թ. Իսկ.	48
5-ն Ամեն. Տէր Եսայի	Ս	Արքեպիսկ. Պատ.	Ս. Երուսաղէմի	» 39
6 ն Ամեն. Տէր Մկրտիչ	Ս	»	Խրիմեան Վան.	Վ. վ. » 38
7 ն Գեր. Տէր Խորէն	Ս.	Եպիսկ.	Աշըքեան »	Արմաշ. վ. » 35

Նոյն այս ցուցակ եօթն ընտրելեաց ստորագրեալ յամենայն անդամոց եկեղեցական Համագումար ժողովոյն ներկայացաւ Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյ:

Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովն գումարեցաւ ի նոյն աւագ եկեղեցւոջ մայրաքաղաքիս յերկրորդում աւուր ամսեանն Ապրիլի, և յառաջ քան զընտրական գործառնութիւն ի նկատումն էառ զառաջարկ կաթուղիկոսական յանձնաժողովոյ՝

որ վասն եղանակի մասնակցութեան Հայոց Օսմանեան պետութեան յընտրութիւն Հայրապետի ամենայն Հայոց, և յետ խորհրդակցութեանց ընկալաւ զառաջարկ կաթուղիկոսական Ցանձնաժողովոյն, որոյ բարեփոխեալ զեղանակ ընտրութեան 1866 ամի՝ ճշդեաց զայն մասն ընտրողութեան, զորմէ և Սրբազումար միաբանութիւնդ ակնարկէր գրութեամբ իւրով որ յառաջներորդում աւուր ամսեանն Փեարվարի այսր ամի։

Ահաւասիկ որոշողութիւն Ազգային Երեսփոխանական Ընդհ. Ժողովոյ։

« Ազգային Երեսփոխանական Ժողովն Հայոց Տաճկաստանեայց ի միջոյ ցանկի քուէարկելոյ նախապէս ի Համագումար Եկեղեցական Ժողովոյ Հայոց Թուրքիոյ յանուն առաջնորդական վիճակացն Հայոց եղելոց ընդ իրաւասութեամբ Պատրիարքի Կ. Պոլսոյ կընտրէ միակ քուէարկութեամբ երեք ընտրելի Եպիսկոպոս ի Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց »։

« Այս եղանակաւ պատրաստեալ եռանուն ցանկը կրդասակարգուի ըստ թուոյ քուէից և առաջի անուան իւրաքանչիւր ընտրելոյն կընշանակուի թիւ քուէից զոր ստացաւ »։

« Եկեղեցին Հայոց որ ի Տաճկաստան, ըստ որում կազմէ զմեծամասնութիւն Ազգին Հայոց, պահանջած է, և կրպահանջէ իրաւամբ որ իւր եռանուն ցանկն ամբողջապէս և նշանակութեամբ քուէից ընտրելեացն մնանէ ի քուէտուփն քուէարկութեան որ կրկատարուի ի Կաթուղիկէ Տաճարի Սրբոյ Էջմիածնի »։

« Այն ընտրելին՝ որոյ յԱզգային Ժողովին ստացած քուէից վրայ բարդուելով Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց քուեայքն կրստանայ զմեծամասնութիւն քուէից, նա է ընտրեալ Հայրապետն և Կաթողիկոս ամենայն Հայոց »։

« Պատրիարքն Կոստանդնուպօլսոյ պատրաստեալ զեռանուն ցանկ ընտրելեաց հաղորդէ առ Տեղակալն Արարատեան Մայր Աթոռոյ ի ձեռն առանձին պատուիրակի, տալով նմա պաշտօն ներկայ գտանիլ, և ընտրական գործողութեանց վերայ նշանակեալ պայմանաց մէջ մասնակցել յանուն Հայոց Տաճկաստանեայց »։

Եւ ապա Ազգային Երեսփոխանական Ժողովն մասնակցութեամբ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքին Սրբոյ Երուսաղէմի և Ներկայացուցչի Տանն Աղթամարայ և ինն ինն Երեսփոխանաց յորոց երեքին են ի վիճակացն Կիլիկիոյ, քուէարկեաց զերիս ընտ-

րելի Եպիսկոպոսունս ի ցանկէ անտի ընտրելեաց քուէարկելոյ յեկեղեցական Համագումար ժողովի անդ, և ելք քուէարկութեանն նշանակեցին զհետագայս զորս յառաջ բերեմք»։

1-ն Ամեն. Տէր Ներսէս	Ս. Արքեպ.	Պատր. Կ. Պոլսոյ	քուէ	62
2-ն Ամեն. Տէր Մկրտիչ	Ս. »	Խրիմեան	»	50
3-ն Գեր. Տէր Մելքիսէդ	Ս. »	Մուրատեան	»	42

Այս են ահա արդիւնք գործոց Ազգային Երեսփոխական ժողովոյն, և անուանք երից ընտրելեաց, զորս նոյն ժողովն ի դիմաց ամենայն վիճակացն Հայոց Օսմ. պետութեան առաջարկէ Սրբազումար ընտրողական ժողովոյ Սրբոյ Էջմիածնի ըստ պարունակութեան և զօրութեան վերոյ յիշատակեալ որոշման։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս Քահանայապետ երկնաւոր հրաշափառ իջմամբն երկրորդ անգամ եդ զհիմն Առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց, շնորհեսցէ նմին զփառս առաւել քան զառաւել, և առաջնորդեսցէ յընտրութիւն արժանաժառանգ Գործակալի, և աջակից լիցի և զօրավիգն հայրապետին ընտրելոյ ի բարեզարդութիւն եկեղեցւոյ իւրոյ. և յանայլայլակ և յանվթար պահպանութիւն օրինացն, կարգաց և կանոնաց աւանդելոց ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, ի Սրբազան Առաքելոյց և ի Հարցն Սրբոց բարեխօսութեամբ բազմերախտ Հայրապետին մերոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և ամենայն երանաշնորհ Հայրապետաց Առաքելական և ուղղափառ ս. եկեղեցւոյս Հայաստանեայց։

16 ապրիլ 1884
ի Պատրիարքարանի Հայոց
Կոստանդնուպոլիս

Մնամ
Ամենապատիւ Սրբազնութեան
Ձերում աղօթակից եղբայր

Կնիք

Նէրսէս Արքեպիսկոպոս